ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սպանդարյան 1

№ 4597-Ա « 12 » նոյեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 12-ի N 259-Ն որոշման հավելվածի 6-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով.

1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, ընդհանուր՝ 7404480 /յոթ միլիոն չորս հարյուր չորս հազար չորս հարյուր ութսուն/ ՀՀ դրամ արժեքով գույքը, ընտանիքի կենցաղային կարիքների համար օգտագործելու նպատակով, նվիրաբերել սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին՝ համաձայն հավելվածի:
2. Լիազորել Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարին՝ Երևանի քաղաքապետի անունից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, սույն որոշման հավելվածում նշված անձանց հետ կնքել գույքի նվիրաբերության պայմանագրեր:
3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի վրա:
4. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ